

ՅԱ. Ա. ՅԱԿՈՎԼԵՎ

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ  
ՍԵՐՄԵՐԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ  
ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Զեկուցում Համ Կ(ր)Կ Կիմուկովի սլեհումում ,  
1937 թ . հունիսի 28-ին

633.1

ՅՄ-25

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ● 1937 ● ՅԵՐԵՎԱՆ

633.1

3m-25

~6

Գրութառման բալոր յերկիրքների, միացե՛ք

ՏԱ. Ա. ՅԱԿՈՎԼԵՎ

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԸ  
ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ձեկուցում Համ Կ(ր)Կ Կենտկոմի պլենումում,  
1937 թ. հունիսի 28-ին



ԽՈՀ ՄԻՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ  
ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԸ ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ  
ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2420

ՀԱՅԿՈՒՄԱՐՏ

1937

ՅԵՐԵՎԱՆ

ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԸ  
ԲԱՐԵԼԱՎԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ  
ԶԵԿՈՒՑՈՒՄ ՀԱՄԿ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ ՊԼԵՆՈՒՄՈՒՄ,  
1937 թ. ՀՈՒՆԻՍԻ 28-ԻՆ

## I

ՍԵՐՄԱՑԻՆ ԳՈՐԾԻ ԴՐՎԱՆՔՈՒՄ ՅԵՂԱՇ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Հացահատիկային կուլտուրաների սերմերը բարելավելու միջոցների մասին» վորոշման նախագիծը, վորը Պլենումի ուշադրությանն և առաջարկվում, սերմային գործը խճճված դրությունից գուրս բերելու ուղղությամբ կուսակցության կենտրոնական կոմիտեյի և ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհրդի անցկացրած յերկարատե աշխատանքի արդյունքն և հանդիսանում:

Սկսեմ այն բանից, թէ ինչ թերություններ կան սերմերի վերաբերյալ աշխատանքում և վորպիսիք եյին մեր պետության թշնամիների—ամեն տեսակի վնասարարների կողմից այդ գործում հանդես բերված վնասարարության ակտերը:

Բազմամյա պրակտիկայով ստուգված գյուղացիական սերմերի մի շարք տեսակներ գուրս են քշվել կամ ավելի ստույգն ասած՝ համարյա վոչնչացվել են: Հիշատակեմ թեկուզ Կուրանկա, Արնառուտկա պինդ ցորենները, վորոնք ամբողջ աշխարհին հայտնի յեն: Ամերիկայում նրանք մինչև այժմ ել հարյուր հազարավոր հեկտար ցանքատարածություն են գրավում: Այսուհետև, հիշատակեմ Ղրիմկան: Ամերիկայի յերկրագործության գեղարտամենտը 1936 թվի հաշվետվության մեջ ավյալներ և հրապարակել այն մասին, թէ ամերիկյան ֆերմերներն ինչ տեսակներ են ցանում: Յես հաշվել եմ. Ամերիկայում աշխանացան ցորենի տարածության կեսը մեր Ղրիմկան ու նրանից բուծված տեսակներն են գրավում: Իսկ մեզանում Ղրիմկան իրաղես վո-

853

38

Я. А. ЯКОВЛЕВ

● МЕРАХ ПО УЛУЧШЕНИЮ  
СЕМЯН ЗЕРНОВЫХ КУЛЬТУР

Армпартиздат, Ереван, 1937

Հընչացված է : Մի քանի աչքի ընկնող մասնագետների հայտարարություններն այն մասին, թե մեր պայմաններում Դրիմկան անպետք է, փաստերով հերքվում են : Առաջին, Լիսենկոն ներտեսակային խաչասերում կիրառելով ստացել և բավականաչափ ձմեռնագեիմացկունությամբ աչքի ընկնող Դրիմկա : Յերկրորդ, Ամերիկայում Դրիմկայի զրագած հսկայական դուռում անպայմանուրեն կան շրջաններ, վորոնք համանման են մեր մի քանի շրջաններին :

Սերմաբուծության դործի համար վոչ պակաս վնասակար է հանդիսացել վաստեսակների արմատացումը մի շարք սայոնների ցանքերում : Այս բնադավառում ամենից աղաղակող որինակը Յեղիսիումի (ցորենի մի տեսակը, վորը լավ և Արևմտյան Սիրիրի շատ ըրջաններում) տարածումն և ամբողջ վոչ-սեահողային շերտում : Այդ կատարվում եր Բուռաբուծության ինտիտուտի բաժանմունքը հանդիսացող Պետական տեսակացանցի վնահատականի համաձայն, առանց վորեն հիմունքի : Թե վնասարարներն ինչպիսի մեթոդների յևն գիմել այստեղ, յերևում և նրանից, վոր ամբողջ վոչ-սեահողային շերտում մրեկի կողմից տառացիորեն խօսվող Յեղիսիումը Պետական տեսակացանցի հրապարակուն պաշտոնական աշխատություններում գնահատվում և վորպես մրիկադիմացկուն տեսակ :

Արևմտյան մարդում, որինակ, վորտեղ ըստ ՀԲԻ (ԲԱՐ)-ի Պետական տեսակացանցի պահանջման Յեղիսիուն ամեն տարի սկսել և ցանվեր, կուտնահոսություններին հարկադրում եյին տեղական «լեզովկա» լավ տեսակի ցորենի իրենց սերմերը փոխանակել Յեղիսիումի սերմերի, այսինքն այն տեսակի հետ, վորի Արևմտյան մարդի պայմաններում «լեզովկայից» զգալիորեն նվազ բերքատու դուրս յեկավ :

Վատ տեսակների արմատացման կողքին կան սելեկցիոն լավ տեսակները խեղջերու վորքեր, տեսակներ, վորոնք սառուղված են նաև գյուղացիական պրակտիկայով : Այսպես որինակ, Մերյանուպուս 009 պինդ ցորենի լավ տեսակի ցանքերը 1933-ից առ 1936 թ. վոչ միայն չեն աճել, այլ 1½ անգամ կրծատվել են : Մյուս որինակը Լյուտեսցենս 062 դաքանացան ցորենն է . Պետական տեսակացանը մի շարք տարիների ընթացքում այս տեսակն աչքաթող եր արել այն պատճառաբանությամբ, վոր նա իբր թե մրիկով վարակվում է, մինչդեռ բնդհակառակը նրա

վարակումը մրիկով իրապես ավելի թույլ է, քան մյուս տեսակներինը :

Այս կատարկցությամբ հարկ է զգացվում հատկապես նշելու արտասահմանում բուծված սերմերի լավ տեսակները մեր յերկրից թաղցնելու փաստը : Մինչդեռ մեր մի քանի դիտական ինստիտուտների եքսպերտները ցորենի ամենավայրէ նախահայրերից հետեւից ընկած ըրջադաշտում եյին Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի խուլ անապատներում, մեզ տեղեկություններ չեյին հազորդում հացահատիկների այն լավագույն տեսակների մասին, վորոնք վերջին 20 տարվա ընթացքում բուծված եյին ուրիշ յերկիրներում : Դեռ ավելին . Ամերիկայում, Եվրոպայում, Ֆինլանդիայում և ուրիշ յերկիրներում բուծված և իրենց հատկությունների չնորհիվ այնտեղ միլիոնավոր հեկտարների վրա տարածված տեսակները մեզանում նույնիսկ չեյին ել վորձարկմում : Ներկայումս մենք ավշաներ չունենք, վորպեսզի կարողանանք դատել Մարկելիկայի և ԱՄՆ-ի ու Կանադայի կողմից նույն այդ Մարկելիկայից բուծված տեսակների պիտանիության մասին մեր միջին շերտի համար, և այդ չնորհիվ այն բանի, վոր ՀԲԻ (ԲԱՐ)-ն (Համամիութենական Բուռաբուծական ինստիտուտը) ինչ-վոր պատճառով Մարկելիկան փորձարկել և միմիայն հարավում : Իսկ այդ տեսակն ահա 20 տարի յե արդեն, ինչ համաշխարհային սահմանադրությունների բարելավման աղբյուր և հանդիսանում ԱՄՆ-ում ու Կանադայում :

Կուսակցության կենտրոնական կոմիտեյի վերաշումով, առանց վորեւե առաջադրության գյուղատնտեսական մասնակիւնների ու Հողգողկոմատի կողմից, այս տարի փորձարկման համար ներմուծված են Ամերիկայի ու Եվրոպայի ցորենների մի քանի լավագույն տեսակներ :

Գետք և նշեմ նաև տեսակափորձման սխալ, վոչ-դիտական կազմակերպումը, վորը մեզ հնարավորություն չի ընձեռում գտանելու մեկ տեսակի առավելությունների մասին՝ մյուս տեսակների համեմատությամբ : Յես արդեն չեմ խոսում 1936 թվականին իր թե գործի բարելավման նպատակով անցկացված կրծատման մասին, վորով տեսակադաշտերի ցանցն իջեցըրմեց մինչև 130-ի՝ մեր ամբողջ յերկրի համար :

Պետական տեսակացանը միքանի տեսակներ, ընդնմին լավերը (և այս առանձնապես վրդովեցուցիչ ե), այնպես և մի տեսամասից մի ուրիշ տեղամաս շպրտել, վոր նույնիսկ բազմամյա

փորձարկումից հետո վոչ մի հնարավլսրություն չկա դատելու, թե այլալ տեսակը վոր շրջանի համար և հատկապես պիտանի:

Տեսակները փորձարկումից հանելը Հողժողկոմատը կատարել և այնպիսի մի մեթոդով, վորը ցուցադրում և փնտիռության և անդատասխանատվության միակցումը վնասարարության հետ: Հողժողկոմատի Հացահատիկային վարչության պետի առաջնագույն կազմը մեկ գորությամբ վիճակ յե դնում 75 տեսակի տեսակալորձումը հանելուն, իսկ ժողկոմի նախկին առաջնագույն առաջնագույն կազմը Մուրալովը գրչի մի շարժումով՝ հաստատում և այդ «ակտը»:

Այս գեղքում վորտեղ և վերջանում բյուրոկրատական վրանիությունը և վորտեղ և սկսվում տնտեսությանը հսկայական վնաս հասցրած վնասարարությունը, այդ քննելու պարզել կկարողանան, իհարկե, ՆԳԺԿ-ի մարմիններն ու գատարանը:

Այսուհետեւ — սերմերի՝ ծայրահեղ անհրաժեշտությունից չթելադրված փոխադրումները մեկ յերկրամասից գեղի մյուսը:

Փաստ ե, վոր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի թեկուղ և ուշացումով կատարած միջամտության չնորհիվ, — այդ պետք եր անել, ինչպես յերեսում ե, շատ ավելի առաջ, — կույրիչի մարզը դադարեցրեց հացահատիկի աղալը և առնվազն տեղական արտադրության յերկու միլիոն փութ ցորեն ու վարսակը հատկացրեց սերմացի համար, ըստ վորում աղունի աարգող այդ հացահատիկի փոխարեն՝ Մթերման Կոմիտեյի ու Հողժողկոմատի պլանով եր սերմերի ներկրում հարավային ծայրամասից:

Փաստ ե, վոր ցանելու համար Ուկրաինայից Արեմտյան մարզ ներկրված եր 450 հազար փութ խրիուկոտ վարատի, և կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի միջամտության չնորհիվ միայն այդ սերմերի փոխարեն ցանքի համար հատկացվեցին Սրբամայան մարզի պետական պահեստներում յեղած՝ տեղական ծագում ունեցող մաքուր:

Փաստ ե նույնպես, վոր կուսակցության Կենտրոնական Կոմիտեյի միջամտության հետեանքով Բաշկրիայում «Զարուղեանոյի» պահեստներում հայտարերվել են հանրապետության համար անհարկավոր կես միլիոն փութ տեղական ծագում ունեցող սերմեր, վորոնք և ցանելու համար ուղարկված են Կիրովի մարզը, պլանով նախատեսված ուկրաինականի փոխարեն:

Կալինինի մարզը, վորի համար նախանչված եր վարատի

ներկրում Ուկրաինայից, Կենտկոմի պահանջների ճնշման տակ վարսակ գտավ հենց իր մարզի սահմաններում: «Զարուղեանոյի» Արեմտյան Սիրիբի կետերի կողմից Զելյարինսկի մարզն ուղարկված և ստուգված 350 հազար փութ ցորենից 250 հազար փութը դուրս յեկավ ամենատարրական պահանջներին չբավարարող սերմացու: Հացահատիկի զգալի մասը հատիկատիզով վարակված ու փտած դուրս յեկավ: Իսկ Պոսպելիխինի կետի կողմից վորակի մասին գրված վկայականներում նույնիսկ ծաղրական նշում եր զետեղված — «Անձեռնմխելի Փոնդ՝ հատիկատիզի փոխագրման կարգով»:

Վերջապես, անկատած վնասարարություն եր ԽՍՀՄ-ի Հողժողկոմատի հրաժարվելը տեսակային ցանքերի ապրոբացիայից: Ապրոբացիայից հրաժարվելու հետևանքով տեսակային սերմերը չհայթայթվելով տեսակային վկայականներով, 1936 թվականին «Զարուղեանոյի» պահեստներն ուղարկվեցին վորակս սպորական հացահատիկ: Այդ բանից մեծ հաճույքով ոգտվեցին «Զարուղեանոյի» չինովնիկները, վորակեալի իրենց ազատած լինեն տեսակային հացահատիկն առանձին պահելու զինացավանքից: Հողժողկոմատի կողմից անցյալ տարի ցանքերի ապրոբացիայից գողունի կերպով (իբր թե զբամի բացակայության պատճառով) հրաժարվելու հետևանքով շատ տասնյակ միլիոն փութ առաջնակարգ տեսակային նյութ վոչնչացվեց, աղունի վերածվեց «Զարուղեանոյի» պահեստներում:

Մթերման կոմիտեյի շատ աշխատողներ պետությանը վնաս են հասցրել նաև առանց վնասարարներ լինելու: Բերեմ մի քանի փաստեր: Սամոյլովոյի ելեվատորում (Սարատովի մարզ) Սառություն տեսակային ցորենի մեջ թափել են Երիտրոսպերում 0341 ցորեն: Նույն այդ տեղում մի շաբաթ հատիկավահեստարաններում փափուկ ցորենը խառնել են պինդ ցորենի հետ: Սարատովի մարզի Յեկատերինովոյի ելեվատորում 2000 փութ տեսակային ցորենը թափել են շաբաթյինի մեջ: Մոսկվայի մարզի Սասովոյի ելեվատորում շատիլովյան վարսակը թափել են Մոսկվայի: Ա 315 վարսակի մեջ: Նույն Մոսկվայի մարզի Պոնոմարեսկի կետում Ցեղիում ցորենը թափել են Լյուտեսցենօ ցորենի մեջ:

Հողալին մարմինների և հատկապես Հողժողկոմատի Հացահատիկային զինացավոր վարչության անբավարար, վնասարարու-

թյան հետ միակցվող աշխատանքի հետևանքով վլիժել եւ տեսակալին ցանքերը հացահատիկների ամրող ցանքատարածության մինչև 75 %-ին հասցնելու՝ յերկրորդ հնգամյա պլանով դրված առաջադրանքի կատարումը:

Անցնում եմ հացահատիկային կուլտուրաների սերմային գործի կազմակերպման նախագծի հիմունքների շարադրանքին:

## II

### ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Կակսեմ պետական տեսակաստուգումից:

Պետական տեսակաստուգման ներկայիս կազմակերպումը հետեւյալով եւ ընորոշվում:

ա) պետական տեսակահողամասերի թիվն ընդամենը 130 եւ յուրաքանչյուր տեսակահողամասի տվյալներով հարկ եւ լինում փորոշել տեսակների պետականությունը 20-30 ըլջանի համար: Վեհանդամայն որարդ եւ, վոր այդպիսով անխուսափելի յեն ամենակողիտ սիստեմը.

բ) տեսակաստուգման ցանցը յննթակա յե վոչ թե պետական հիմնարկության, այլ Բուսաբուծության ինստիտուտին, վորն ըստ յերեսութիւն, աղաս ժամանակ ըլտնելով՝ շատ վատ եւ կադամակերպել այդ գործը.

գ) տեսակները ստուգումից հանվում ու տնտեսություն մեջ են մտցվում մի անանուն հանձնաժողովի վորոշումներով, վորի կազմում՝ Հողժողկոմատն ու Բուսաբուծության ինստիտուտը յերկրողական աշխատողներով են ներկայացված:

Այս կարդի փոխարեն՝ կենտրոնական կոմիտեն ու Ժողկոմատն ձեր հաստատությանն են ներկայացնում պետական տեսակաստուգման հետեւյալ կարգը.

ա) պետական տեսակաստուգման հողամասերն ստեղծվում են յուրաքանչյուր 2-3 ըլջանի համար: Այսպիսով՝ այդպիսի պետական տեսակահողամասեր կունենանք ընդամենը 1055 հատ, պետական տեսակահողամասեր կունենանք 30 տեսակահողամաս, որինակ, Աղեսայի մարզը կունենա 30 տեսակահողամաս, որինակ, Աղեսայի մարզը՝ 2-ի, Դնեպրոպետրովսկի մարզը՝ զամաս, փոխանակ այժմյան 2-ի, Ազով-Սևծովյան յերկրամասը՝ 50, 30, փոխանակ այժմյան 7-ի, Արջոնիկիձելինը՝ 26, փոխանակ այժմյան 7-ի, Վորոնեժի մարզը՝ 30, փոխանակ այժմյան 3-ի,

Կուրսիկի մարզը՝ 30, փոխանակ այժմյան 2-ի, Արենուրովի մարզը՝ զե՝ 20, փոխանակ 2-ի, Արևմտյան Սեբիրը՝ 43, փոխանակ 7-ի, Հաղափառակոր-Արևելյան Յերկրամասը՝ 25, փոխանակ 6-ի, Ղաղափառակոր-Արևելյան Յուրաքանչյուր 2-3 ըլջանի ստամար՝ 51, փոխանակ 10-ի և այլն: Յուրաքանչյուր 2-3 ըլջանի համար ստեղծված տեսակահողամասը նյութ կատարածական է այս կամ այն թե այս կամ այն տեսակը վորքան պիտանի յե այս կամ այն թվականի համար, և վոչ թե «առհասարակ», ինչպես առաջներում եր արդյում:

բ) մենք առաջարկում ենք պետական տեսակահողամասերը յենթարկել ԽՍՀՄ-ի Հողժողկոմատին կից հեղինակավոր հատուկ հանձնաժողովի, վորի կազմը հաստատում ե ԽՍՀՄ-ի Ժողովրդական կոմիտարների Խորհուրդը: Քատինքյան հականակի ղողովրդական կոմիտարների մեջ անհրաժեշտ կլինի մտցըյե, վոր այդ հանձնաժողովի կազմի մեջ անհրաժեշտ կլինի մտցըյել ԽՍՀՄ-ի տեսակային գործի ամենադիտակ անձերին.

գ) տեսակներն ստուգումից հանելը, տնտեսության մեջ մտցնելը, նույնպես և տիրաժից հանելը մենք առաջարկում ենք մայնպես կազմակերպել, վոր այստեղ բացառովի առանձին մասնակտութեաների կամ հողային ապարատի աշխատողների կամայականությունն ու աշխատությունը: Տեսակը տիրաժից հանելու կամ, ընդունելու աշխատության մեջ մտցնելու, ինչպես և փորձարական կուտական հանելու համար անհրաժեշտ կլինի Տեսակաստուգման կուտից հանելու համար անհրաժեշտ կոմիտարների Խորհրդի կողմից:

Այսպես և տեսակաստուգման բանագլաւուի համար նախատեսված կող կարգը, վորը մենք առաջարկում ենք մոցնել գոյություն ունեցող կարգի փոխարեն:

## III

### ՍԵԼԵԿՑԻՈՆ ԳՈՐԾԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

Սելեկցիոն գործի այժմյան կազմակերպումը հետեւյալով ե ընորոշվում:

ա) տեսակային ցանքերի համար մենք ոգտվում ենք համար-յա բացառապես մինչև հեղափոխությունն ստեղծված տեսակների բոլով: Փաստ ե, վոր տարեկանի, ցորենի, զարու և վարսակի՝ մինչև հեղափոխությունն ստեղծված տեսակները դրաֆում են

տեսակացանքերի տարածության 80%-ը, իսկ հեղափոխությունից հետո ստեղծվածները՝ միայն 20%-ը։ Մինչդեռ ԱՄՆ այդ քսան տարվա ընթացքում հացահատիկների ցանքատարածության կեսի վրա նոր տեսակներ են մտցրել, նրանց բուժման համար կիրառելով և՛ ընտրանքի, և՛ հիբրիդացման մեթոդները։

բ) նոր տեսակ դուրս բերելու մեջ սելեկցիոների անձնական շահագրգություն չկա։

Մինչդեռ գյուտարարը վորոշ տոկոս և ստանում այն տնտեսութիւնը, վոր նրա գյուտն են բերում պետությանը, մինչդեռ գրողին հսուրար և վճարում իր յերկի համար, սելեկցիոների աշտավարձը վոչ մի կախում չունի այն բանից, թե նրա դուրս բերած տեսակը ԽՍՀՄ-ում արդյոք միլիոն, թե մեկ հեկտար և գրավում։

գ) մեզանում տեսակները անվանվում են իրը թե գիտականորեն՝ յեռահարկ համարներով ու բուսաբանական անուններով։ Ի միջի այլոց, ամերիկացիներն այդ միենույն տեսակները մարդագործի, իսկ յերեմն ել պարզապես ուսւերեն անուններով են կոչում։ որինակ, Կուրանկան ԽՄՆ-ում կոչվում է Կուրանկա, իսկ մեղանում ընտրանքի միջոցով Կուրանկայից բուժված տեսակը կոչվում է Գորդեյֆորմե։ Մինչդեռ ամերիկացիներն իրենց Տարեգրում ապագրում են 900-ական թվականներին Ռուսաստանից լավագույն տեսակներ դուրս տարած իրենց հետախույզ Կարլոսնի պատկերը, մեզանում սելեկցիոն դորձն այնպես և կազմակերպված, վոր մի շարք լավագույն տեսակների հեղինակները պարզված չեն, և հայտնի յէ միայն այն կայանը, վարտեղայս կամ այն տեսակը բուժվել եւ։

դ) սելեկցիոն դործի ամենախոչըր թերությունն այն եւ, վոր հաճախ սելեկցիոն կարաներն սպասարկում են միքանի մարզիք—կլիմայական ու հողային տարբեր պայմաններ ունեցող հակայական շրջաններ։ Յեվրոպականի և նույնիսկ ամերիկականի համեմատությամբ մեր սելեկցիոն կայանների ցանցը շավազանց աղքատիկ եւ։

Արանք են մեր սելեկցիոն աշխատանքի հիմնական թերությունները։

Նրանց վերացման համար անհրաժեշտ և սելեկցիոն դործը կազմակերպել հետեւալ հիմունքներով։

ա) սելեկցիոններին խրախուսելու համար մենք անհրա-

ժեշտ ենք համարում մտցնել սելեկցիոնների պարզեատրում, ըստ վորում պարզեաչափերը պետք եւ վորոշվեն տեսակի՝ տնտեսական ցանութերում գրաված տարածության համեմատ։ Նոր տեսակը բուժուղ սելեկցիոններին չեւ մենակ, վոր մենք անհրաժեշտ ենք համարում պարզեատրել։ Ընկ. Լիսենկոն, որինակ, ներտեսակային խաչասերման միջոցով վոչ իր կողմից բուժված տեսակին նոր ուժ եւ տալիս, և նրա բարելաված տեսակը վորոշ պարզ եւ, վոր ընկ. Լիսենկոն ել պետք եւ պարզեատրովի, նայած իր բարելաված տեսակի դրաված տարածությանը տնտեսական ցանքերում։ Այսուհետեւ վերցնենք, որինակ, Գորկու մարզի սելեկցիոն կայանը, վորն իր մարզի համար կրագմացնի Սարատովի կայանի յանը, վորն իր մարզի համար կրագմացնի Սամարայի բուժած Լյուտեսցին 062 ցորենի ելլարը։ Բատինքյան հասկանալի յեւ, վոր Գորկու մարզի սելեկցիոն կայանի ծառայությունն եւ շատ մեծ կլինի, վորովհետեւ նա յուր մարզի տնտեսություններին հսարագործություն կտա ողպակելու Սարատովի լավ տեսակից, վորի սերմերը հենց տեղում են ստեղծվել։ Սրան համար կամականի մենք անհրաժեշտ ենք համարում 1937 թվականից պատասխան սելեկցիոն կայանների ու սելեկցիոնների պարագանել սելեկցիոն կայանների ու սելեկցիոնների պարագանելարարություն ունեցող տեսակի բարելավման հակոբեկի հաշվով՝ դոյություն ունեցող տեսակի բարելավման համար, պարզեի 50%-ը տալով սելեկցիոններին (բայց տարեկան 50 հազար սաւրուց վոչ ավելի), 5%-ը սելեկցիոն կայանի դիբեկորին՝ իր աշխատած ժամանակ բուժված կամ բարելավված բեկորին համարականի համարը պարզեի 45%-ը դրվում է սելեկցիոն կայանի դիբեկորի տրամադրության տակ՝ պարզեատրելու համար մեր աշխատավորներին, վորոնք մասնակցել են նոր տեսակի բուժման կամ գոյություն ունեցող տեսակի բարելավման տակի բուժման կամ գոյություն ունեցող տեսակի բարելավման նոր գործում։ Պարզեատրման այս կարգը մենք առաջարկում ենք գործում։ Այդպիսի վկայականները «Տեսակի բարելավման վկայական»։ Այդպիսի վկայականները «Տեսակի բարելավման վիճակ» կողմէ ԽՍՀՄ-ի Հազարդության ժապարեալու և սառագրոված մենք ԽՍՀՄ-ի Հազարդության ժապարեալու մեջ առաջարկում կամ բարելավման վիճակ»։

բ) մենք անհրաժեշտ ենք համարում, վորովհետ գյուտարարություն արժողություն արտօնագրի (պատենտի) համանմանությամբ՝ նոր տեսակ բուժած սելեկցիոններին հողժողկոմմատի կողմից «Հեղինակային վկայական» արվի, իսկ տեսակ բարելավող սելեկցիոններին կայանի վկայական»։ Այդպիսի վկայականները «Տեսակի բարելավման վկայական»։ Այդպիսի վկայականները «Տեսակի բարելավման վիճակ» կամ բարելավման վիճակ»։

վրդական կոմիսարի կողմէց՝ խորհանակառությունների ու Սնունդ-արդյունաբերության ժողովրդական կոմիսարների և ԽՍՀՄ-ի ժողովագործին կից Մթերման կոմիտեյի նախագահի հետ միաւսին.

Դ) պետական սելեկցիոն կայաններ անհրաժեշտ են հիմնել, վորագես կանոն, յուրաքանչյուր հանրապետության մեջ, յերկրամասում ու մարզում, իբրև բացառություն թույլ տալով յերկու յերեք մարզի կամ ինքնավար հանրապետության սպասարկումը մեկ սելեկցիոն կայանի կողմէց այն դեպքում միայն, յերբ նրանց կլիմայական ու հողային պայմանները նման են և հացահատիկային ցանքատարածությունները՝ վոչ մեծ:

Կենտկոմի գյուղատնտեսական բաժնում ու ԽՍՀՄ-ի Հողժողկոմատում յեղած ավյանների համաձայն այդպիսի կայաններ առանց դժվարությունների կարող են հիմնվել համարյա յուրաքանչյուր հանրապետության մեջ, յերկրամասում ու մարզում: Վորտեղ սելեկցիոն կայաններ չկան, այսուեղ սելեկցիոն կայան կազմակերպելու համար կարելի յե ոգտագործել կամ փորձակայանների սելեկցիոն բաժինները, կամ առանձին հենակետեր, վորտեղ աչքի ընկնող աշխատողներ կան, կամ նույնիսկ վորոշ խորհանուեսությունների բաժանմունքները: Որջոնիկիձեյի յերկրամասում, որինակ, հանձին բազմամյա կուլտուրաներ ստեղծելու վրա աշխատող տաղանդավոր սելեկցիոններ Դերժավինի և նրախմբի աշխատողների՝ մենք ունենք հարկավոր մարդկային կագք այն բանի համար, վորպեսզի զարդացնենք սելեկցիոն դործն Ատալրոպոլի շրջանի համար: Յեթե մենք ընկ. Դերժավինին հանձնենք ՀԲԻ (ՎԻՐ)-ի՝ ժանդի դեմ պայքարող կայանը, ապա կարող ենք 2—3 տարվա ընթացքում լուրջ սելեկցիոն կենտրոն ստեղծել Որջոնիկիձեյի յերկրամասում:

Յարուղավի մարզում սելեկցիոն կայան կարելի յե ստեղծել «Վաղրուգենին» խորհանուեսության բարյայի վրա: Ազգ-Սեծովյան յերկրամասում ըստ յերկութիւն հարկ կլինի յերեք սելեկցիոն կայան ունենալ, այն ե, Կրասնոդարում՝ աշխանացան ցորենի Կուրանյան գոտու համար, Տաբասովկայում՝ Դռնի շըրջանների գարնանացան ցորենների համար և «Վերբլյուդ» խորհանուեսությունում՝ Սալսկի տափաստանների համար:

#### IV

### ՇՐՋԱՆԱՑԻՆ ՍԵՐՄԱԲՈՒԾԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՅԵՎ ՀԱՅԱՍՏԱԿԱՑԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՄԱՍԻՆ

Տեսակավոր սերմերի արտադրման և տեսակափոխման դույմյուն ունեցող սիստեմը հանդում են հետևյալն:

ա) տեսակավոր հացահատիկը կոլտնտեսային վոչ-տոհմականի հետ վոլխելու համար և սերմափոխման համար այն գեղջում, յեթե այդ անհրաժեշտ են, հիմնականում արտադրվում և սերմաբուծական խորհանուեսություններում: Սերմաբուծական այդ խորհանուեսությունները կազմավորվել են տարերայորեն շատ տարիների ընթացքում, 2—3 խորհանուեսություն ամբողջ մարզի համար և սպասարկում են հոկայական սերիտորիաներ վորոշ մարդկում չկա և վոչ մի սերմաբուծական խորհանուեսություն:

բ) ակուակավոր սերմերն ամեն տարի արվում են խորհանուեսություններին ու կոլտնտեսություններին՝ նրանց ամբողջ ցանցատարածության համար: Զնայած այն բանին, վոր վիրշին տարբիներում պետությունը տեսակավոր սերմերի այնպիսի քանակություն և բաց թողել, վորը բավական կլիներ հացահատիկի ցանքերի կրկնակի, յեռակի տարածության համար, բայց և այնպիս մենք մի շարք տարիների ընթացքում կանգնած ենք անսակցանքերի համարյա միենույն կետում և չենք կատարել տեսակացանքերը հացահատիկային կուլտուրաների տարածություն մինչև 75%-ին հասցնելու՝ յերկորդ հնկամյա պլանով նախատեսված տարածքանքը: Ընդնմին հաճախ տեսակավոր սերմերը վորպես սերմաբարկ են սպասարություն: 2—3 տարի շարունակ սերմաբարկի կարեփ ունեցող կոլտնտեսությունն ամեն տարի տեսակավոր (իսկ յերբեմն ել տեսակավորի մարկայի տակ՝ վոչ-տեսակավոր) սերմեր և ստանում, իսկ սերմաբարկի կարեփ չունեցող կոլտնտեսությունը հաճախ տեսակավոր սերմեր ձեռք դցել չի կարողանում:

գ) կոլտնտեսությունների ամբողջ ցանքատարածության համար տեսակավոր սերմեր մատակարարելու և տեսակավոր սերմերը սերմաբուծական խորհանուեսությունների վոչ մեծ ցանցում արտադրելու դոյությունը ունեցող կարգը հասցնաւմ ե այն

բանին, վոր անխուսափելի յեն դառնում սերմերի փոխադրումները, հաճախ ել շատ հեռավոր տարածությունների վրա: Բեռնումների, բեռնաթափումների ու պահպանումների ժամանակ՝ չհարմարեցված ելեվատորներում տեղի յե ունենում տեսակների անխուսափելի կեղտոտում ու խառնում, ստեղծվում են ամեն տեսակի վնասարարների գործունեյության համար նպաստավոր պայմաններ:

Տեսակափոխման այժմյան սիստեմի փոխարեն մեր կողմից առաջարկվող նոր սիստեմը հանդում է հետեւյալին.

ա) տեսակավոր սերմեր արտադրելը մենք առաջարկում ենք դնել շրջանային սերմարուծական տնտեսությունների վրա (կոլտնտեսություններ ու խորհնտեսություններ), վորոնցից յուրաքանչյուրն սպասարկելու յե 1—3 շրջան՝ 100 հազար հեկտարից վոչ ավելի ցանքով: Յերկրում այդ կկազմի ընդամենը 678 հազար հեկտար տեսակային հացահատիկների ցանք: Յուրաքանչյուր այդպիսի վոչ մեծ զանդվածի վրա սերմարուծական տնտեսություն ստեղծելը մեկ անդամ ընդմիշտ վերջ կտա տեսակավոր սերմերը հարյուրավոր ու հազարավոր կիլոմետրների վրա փոխադրելու անհամեշտությանը, ավտոմոբիլային փոխադրումներին կփոխարինի յերկաթուղայինը, վնասարարների աշխատանքը կդժվարանա, սերմարուծական կոլտնտեսությունները կամ խորհնտեսությունից սերմեր ստացող տնտեսությունները կցանեն տվյալ շրջանի կլիմային հարմարեցված սերմեր.

բ) մենք անհամեշտ ենք համարում սերմարուծական կոլտնտեսությունների վրա պարտականություն դնել քաղհանելու ցանքերը վոչ միայն մոլախոտերից, այլև հացահատիկային այլ կուլտուրաներից, ինչպես և հիմնական կուլտուրայի այլ տեսակներից, —մի աշխատանք, վորը կարող ե կատարվել միմիայն ձեռքով և վորն ընդնմին շատ աշխատընկալ աշխատանք է:

Մենք առաջարկում ենք հետեւյալ արտոնությունները տակ սերմարուծական կոլտնտեսություններին, սերմերի արտադրման գործում նրանց նյութապես շահագրղություն համար.

Հացահատիկների հանձնման կարգով սերմարուծական կոլտնտեսություններից ընդունվող տեսակավոր հացահատիկի արժեքը մենք առաջարկում ենք վճարել յերկրորդ սեպրոդուկցիայի դներով, այսինքն շարքային հացահատիկի դների կրկնակի չափով.

Հացահատիկի հանձնումից ու ՄՏԿ-ի աշխատանքների համար

տրվող բնավճարից դուրս սերմարուծական կոլտնտեսությունների կողմից պետությանը հանձնվող տեսակավոր հացահատիկը փոխարինվում է շարքային հացահատիկով՝ 40 ֆունտ տեսակավոր սերմի գիմաց 55 ֆունտ շարքային կոնդիցիոն հացահատիկ տալու պայմանով.

Վերջապես մենք անհրաժեշտ ենք համարում յուրաքանչյուր շրջանային սերմարուծական կոլտնտեսությունում դյուղատնտեսին վերցնել պետության հաշվին: Այս նշանակում է, վոր ի լրացումն տեսակափորձման հողամասերը զվարարելիք հազար դյուղատնտեսի մենք սերմարուծական կոլտնտեսությունների մեջոցով սերմային գործի համար կուղարկենք մոտ մի հազար դյուղատնտես ևս.

դ) մենք առաջարկում ենք շրջանային սերմարուծական տընտեսությունների վրա սպարտականություն դնել տեսակավոր սերմեր մատակարարելու համապատասխան շրջանի կոլտնտեսությունների վոչ թե ամբողջ տարածության, այլ շրջանի կոլտնտեսությունների ու խորհնտեսությունների սերմարտաշերի համար միայն: Այս նշանակում է, վոր 100 միլիոն հեկտարի փոխարեն, վորոնց առաջներում մենք փորձում ելինք տեսակավոր հացահատիկ մատակարարել, այժմ մեղ հարկ կլինի այդ խոդիքը լուծել սերմարտաշերի 13 միլիոն հեկտարի նկատմամբ:

Սելեկցիոն կայաններն արտադրում են նոր բուծված կոմարդեն գոյություն ունեցող, Պետական տեսակացանցի կողմից ստուգված ու հավանության արժանացած սելեկցիոն կամ գյուղացիական տեսակների ելիտը: Ելիտի արտադրության համար ամբողջ յերկրում գտնված սելեկցիոն կայաններում կազմահանդիլ ընդամենը մոտ 10 հազար հեկտար ելիտային ցանք, վորը կապահովի առնվազն 75 հազար ցենտներ ելիտ և հնարավորություն կտա ելիտային սերմերով ցանելու շրջանային սերմարուծական տնտեսությունների սերմարտաշերը:

Շրջանային սերմարուծական տնտեսությունները 678 հազար հեկտար հացահատիկային ցանքատարածությամբ կտան առնվազն 30 միլիոն փութ յերկրորդ սեպրոդուկցիայի հացահատիկ: Մենք այս չափերում ենք սահմանում Պետական տեսակային ֆոնզը: Այս 30 միլիոն փութը բավական է, վորպեսզի ամեն տարի ընտրովի հացահատիկով ապահոված լինենք յերկրի բոլոր կոլտնտեսությունների  $\frac{1}{4}$ -ից մինչև  $\frac{1}{3}$ -ի սերմարտաշերը: Այսպիսով, 4 տարվա մեջ մեր յերկիրը հնարավորություն կռւնենա

կազմակերպված կերպով, և ընդունին տեղական պայմաններում կատարված բազմազատիկ ստուգումով, տնտեսության մեջ մոցներու ցանկացած տեսակը, վորը պետական փորձամբ առաջնություն կնվաճի իր բարձր բերքատառությամբ, հիմանդրությանների, վնասատուների հանդեպ ձեռք բերած մեծ դիմացիությամբ, ամենալույ ալբաղացային կամ ուրիշ հատկություններով:

## V

### ՏԵՍԱԿԱՎՈՐ ՍԵՐՄԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՖՈՆԴԻ ՄԱՍԻՆ

Բոյց և այնպես այլ գեր բավական չեւ Մենք չենք կարող վոչ մի վայրկան աչքաթող անել այն, վոր մեր յերկիրը յեկրտական ամեն մի յերկիր և նույնիսկ ԱՄՆ-ի համեմատությամբ հանդիսանում է մի յերկիր, վորը աչքի յեւ ընկնում իր ցամաքացին կլիմայով: Քանի դեռ մենք վոսովում չենք անցկացրել Զավոլժյառամ և չորացին ուրիշ մարզերում, հնարավոր են 1921, 1931 և 1936 թվականների տիպի չորացին տարիների ուրբարեական կը կնումներ: Յուրաքանչյուր այդպիսի տարին, դժբախտաբար, մինչեւ այժմ մեզ չառ հետ և մզում հատկապիս սերմային ինլըռում: Սերմերի վորակի խնդրում 1931 թվականի յնրաշտի հետեանգները մենք զդում ենք զետես 1932 և 1933 թվականներին:

Վորակնպի յերաշտը, նույնպես և աշնանացանի ցրտահարությունը այսուհետեւ այդ վտանգը չսպասնան մեզ, կենտկոմն առաջընկած և կազմակերպել հացահատիկային կուլտուրաների սերմերի Պետական ապահովագրական Փոնդ՝ 80 միլիոն վութ քանակությամբ:

Հատ մեր հաշիվների՝ պահեստափոնդը կարող է ստեղծվել 3 տարում: Մենք անհրաժեշտ ենք համարում նրա սկիզբը դնել արդեն 1937 թվականին, այս տարի պահեստադրելով 20 միլիոն վութ հացահատիկային կուլտուրաների տեսակալոր սերմեր: Այսուղ չառ եյտական և հանդիսանում այն, թե մենք վորտեղ պետք և պահենք այդ հացահատիկը, ով պետք է պահի այն և ինչ տեսակներ կպահենք ապահովագրական Փոնդի համար:

Պենումի վորոշան նախադիմն անհրաժեշտ է համարում.

ա) թե ինչ տեսակներ ենք պահում ապահովագրական ֆոնդի համար՝ սահմանում եւ ԽՍՀՄ-ի ժողովոմիտքն ամեն տարի:

բ) ապահովագրական Փոնդը պահելու համար Յ տարիա ընթացքում կապուցիլ ելեկալուսունների ու պահեստների հատուկ ցանց: ստանդարտ տիպ ունեցող, տեսակալոր ու վուշտեսակավոր հացահատիկ պահող, կրակաչորացումով սժտված մեր ելեկալուսունները սերմային հացահատիկը յերկարատե պահելու համար պիտանի չեն:

գ) ապահովագրական Փոնդի պահպանումը գնել ԽՍՀՄ-ի Հողագործության վրա:

դ) նրա ծախումը կմտարել ԽՍՀՄ-ի ժողովոմիտքի վորոշամբ միայն:

## VI

### ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԵՐՄԱՅԻՆ ՀՈՂԱՍՍԵՐԻ ՄԱՍԻՆ

Սերմային կործի կազմակերպման այս ամբողջ սփոսեմքը կառուցված և այն բանի վրա, վոր կոլտնտեսություններում սերմային հողամասեր իսկապես զոյտություն ունեն, մինչդեռ իրականում վորոշ մարզերում արդ չկանագաւագային պահանջումների համար այս պահանջումները կատարվում են: Վակայն բոլոր յերկարամասերում չեւ, վոր այդ կործը պատվաստվել և զրա համար յն մեղադրում եմ ԽՍՀՄ-ի Հողագործության վրա:



Հացահատիկապրծների՝ կրմլում կայացած խորհրդակցություն մեջ զյուրացիները լինակոմին հուշեցին սերմային հողամասեր կազմակերպելու վաղաժարը: Փորձից յենելով՝ սկսուած մեզ, վոր սերմային հողամասերը, ամբողջովին արդարացրին իրենց: Սակայն բոլոր յերկարամասերում չեւ, վոր այդ կործը պատվաստվել և զրա համար յն մեղադրում եմ ԽՍՀՄ-ի Հողագործության վրա:

Այս նկատի ունենալով՝ մենք սնհրաժեշտ ենք համարում յուրաքանչյուր հանրապետության մեջ, յերկարամասում ու մարզում արձանադրել սերմային հողամասերի չափերը հեկտարներով: Կոլտնտեսություններում ու խորհուտեսություններում յեղած հացահատիկային կուրսուրաների ամբողջ 100 միլիոն հեկտարներ մեզ հանդիսանուած սերմային հողամասերի համար 13 միլիոն հեկտար:

Յեթե սերմային հողամասերն արդեն 1937 և 1938 թվականներին լիովին պատվաստվեն, յեթե նրանցում կիրառվի վոչ միայն մոլախոտերի, այլև աղտոտող մյուս կուբուրաների քաղանք, իսկ վորտեղ բանուժ կա, նաև տեսակային քաղանք, յե-

թե ապահովված լինի սերմային հողամասերի առանձին բերքահավաքն ու սերմերի առանձին պահպանումը, ապա մենք համատարած տեսակացնքերին անցնելու և ամբողջ հացահատիկային դորձը բարելավելու ամենակարեռը լծակը կստանանք: Նախագիծն առաջարկում է սահմանել, վոր կոլտնտեսությունների ու խորհուտակառությունների սերմահողամասից ստացվող հացահատիկային կուլտուրաների սերմերը բացի ցանքից վորեւ այլ կարեքի համար ողբազործելիս հանցավորները պատժվում են բանտարկությամբ՝ մինչև մեկ տարի ժամանակով, կամ հարկադիր աջակատնքներով՝ մինչև յերկու տարի ժամանակով:

## VII

### ԱՐԴԵՆ 1939 ԹՎԱԿԱՆԻՑ ԱՄԲՈՂՋՈՎԻՆ ԱՆՑՆԵԼ ՏԵՍԱԿԱՅԻՆ ՑԱՆՔԵՐԻ

Պորո՞նք են այն խնդիրները, վոր մենք կարող ենք լուծել այս մեթոդով:

Առաջին խնդիրը, վորը մենք կարող ենք լուծել այս մեթոդով, այն ե, վոր արգեն այս աշխանը տեսակալոր սերմերով ցանենք աշնանային կուլտուրաների բոլոր սերմահողամասերի 70%-ից վոչ պահառը:

Երրկրորդ խնդիրը, վորը մենք կարող ենք լուծել այս մեթոդով, այն ե, վոր առանց բացառության բոլոր խորհուտակառությունների ու կոլտնտեսությունների սերմահողամասերում 1938 թվականին անցնենք միմիայն ընտրովի (ինչպես սելեկցիոն, այնպես ել գյուղացիական) տեսակալոր սերմերի ցանքերին:

Երրորդ խնդիրը, վորը մենք կարող ենք լուծել այս մեթոդով, այն ե, վոր 1938 թվականին դդայիրեն մեծացնենք տեսակալոր սերմերով կատարվող ցանքը:

Չորրորդ խնդիրն այն ե, վոր 1939 թվականից հացահատիկային կուլտուրաների ամրող տարածության վրա ցանենք սերմերի միայն ընտրովի տեսակները, վորոնք անեցված են յուրաքանչյուր խորհուտակության ու կոլտնտեսության սեփական սերմային հաղամասում:

Այս խնդիրը համարձակ կարող ե թվայի: Հիբավի, մենք առաջարկում ենք մի պլան, վորի համաձայն յերկու տարում պետք է իրականացվի այն խնդիրը, վորի վրա մենք չարչարվում ենք տասնյակ տարիներ և արդյունքն այն ե յեղել, վոր ցանքուրի

հազիվ կլոնն է կատարվում տեսակավոր սերմերով: Բայց և այնպես զա ամբողջովին իրագործելի պլան ե:

Փորձագետների սահմանումով՝ հացահատիկային կուլտուրաների սերմային գործի ճշշտ լուծումը, հացահատիկային կուլտուրաների ամբողջ տարածության վրա միմիայն բարձրորակ և խոկան տեսակային, տեղական պայմաններում ստուգված (ինչպես սելեկցիոն, այնպես ել տեղական գյուղացիական տեսակների) սերմերի ցանքին անցնելը մյուս հավասար պայմաններում կարող ե առաջ բերքի՝ վոչ պակաս քան 500 միլ. փութ հավելում: Այս նշանակում ե, վոր ընկեր Ստալինի դրած խնդրի՝ ապրելան 7—8 միլիարդ փութ հացահատիկ հավաքելու խնդրի՝ լուծումը, առնվազն մեկ յերրորդով, ընկնում և սերմերի վրա:

Ընկեր Ստալինը կուսակցության XIX համագումարում խընդիրը՝ գրեց՝ դուքս բերել խճճված գրությունից սերմային գործը: «Հացահատիկային կուլտուրաների սերմերի բարելավելու վկացների մասին» կայացրած վորոշումով կենտկոմը կուսակցության ու խորհուրդներին զինում ե լուծելու համար այդ խնդիրը:

ԽԱՅ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐՆԵՐԻ  
ԽՈՐՀՐԴԻ ՎՈՐՈՇՈՒԸ

ՀԱՅՈՒԹԻԿԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՍԵՐՄԵՐԸ  
ԲՈՐԵԱՎԵԼՈՒ ՄԻԶՈՑՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԽՍՀՄ-ի ժողովրդական Կոմիտարների Խորհուրդը նշում է՝ վոր հոգային մարմինների և առանձնապես ԽՍՀՄ-ի Հաղթողկոմատիք Հացահատիկային Դիլանվոր Վարչության անբավարար աշխատանքի հետեւնքով վիճել և տեսակալվոր ցանքերը հացահատիկային կուլտուրաների ամբողջ տարածության մինչև 75%-ին հասցնելու՝ յերկրորդ հոգամյա պլանով նախառեսմած առաջադրանքի կատարումը։ Խնչվես սելիկցիոն, այնպիս ևլ գյուղացիական մի շարք լավ տեսակներ վոչ միայն չեն բազմացվել անհրաժեշտ չափերով, այլ նույնիսկ հանդել են գործածությունից հետակերի դնահատումն ևլ այնպիս և կազմակերպիչած յեղել, վորը պիտության թշնամիներին, գյուղացիների թշնամիներին՝ ամեն տեսակի մնանարարներին—հնարավորություն և տվել թագունելու կոլտնտեսություններից ու խորհանակություններից ինչպես հայրենի, նույնպիս և ստարերերիյա ծագում ունեցող մի շաբք արժեքալոր տեսակներ և, ընդհակառակը, արմատացնելու վատ տեսակները։ Ապրոբացիա կատարելուց հրաժարվելու հետեւնքով տեսակալվոր հացահատիկների յեղած պաշարները մի շաբք գեղքերում աղալու յեն տարին։ Սերմերի փոխադրումներն առանձին ըրջանների միջև կատարվել և առանց ծայրահեղ կարիքի և առանց հաշվի առնելու ներկրվող սերմերի հարմարունակվածությունը ըրջանների կլիմային։ «Զարուղեանոյի» և «Պետական տեսակային Փոնդի» ելեկտարուրներում ու պահեատներում տարբեր տեսակի սերմերը հաճախ խառնել են իրար։ Հացահատիկային մի շաբք ըրջաններում հողային մարմինները չեն կատարել կառավարության վորոշումը՝ կուտառեսություններում ու խորհանակեսություններում սերմային հողածառեր առանձնացնելու մասին։

ԽՍՀՄ-ի ժողովրդական կոմիսարների Խորհուրդը վարչություն է.

ԲՈԼՈՐ ԿՈԼՏՆԵՏԱԿԻՑՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ԽՈՐՀՆԵՏԱԿԻՑՈՒ-  
ՆԵՐՈՒՄ ՏԵՍԱԿԱՎՈՐ ԸՆՏԻՐ ՍԵՐՄԵՐՈՎ ԶԱՆՔԻ  
ԱՆՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

